ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս 27 30 97, E-mail: info@yermetro.am, www.yermetro.am

№ 39/02-07-825 "25 06 2018 թ.

ԱՁ Հայկ Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ և ԱՁ Հայկ Գալստյանի միջև 23.01.2018թ. կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/5-1 ծածկագրով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-ժամանակացույցով նախատեսված ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ԱՁ Հայկ Գալստյանը խախտել է Պայմանագրի 1.1 կետով ամրագրված պահանջները և չի կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի համաձայն, Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն, «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմաագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատալարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի

Ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը կազմում է 6 240 ՀՀ դրամ / 780 000 x 0,05% x 16 /:

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ներկայացնում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, միաժամանակ առաջարկում եմ վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված 6 240 /վեց հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ տույժը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ «Արարատբանկ» ՓԲԸ 1510003671520100 հաշվեհամարին:

Տնօրեն՝ Փ.Յայլոյան